

Համարը N 413
Տիպը Որոշում
Սկզբնաղբյուրը ԼՂՀՊՏ-ում չի հրապարակվել
Ընդունող մարմինը ԼՂՀ կառավարություն
Ստորագրող մարմինը ԼՂՀ Վարչապետ
Վավերացնող մարմինը
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 16.11.2004

Տեսակը Մայր
Կարգավիճակը Գործում է
Ընդունման վայրը Ստեփանակերտ
Ընդունման ամսաթիվը 16.11.2004
Ստորագրման ամսաթիվը 16.11.2004
Վավերացման ամսաթիվը
Ուժը կորցնելու ամսաթիվը

ԼՂՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ, ՄԱՐԶԱԿԱՆ ԵՎ ՌԵԿՐԵԱՑԻՈՆ
ԿԱՌԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԶՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԼԵՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

"16" նոյեմբերի 2004թ.

N 413

ք.Ստեփանակերտ

, ՄԱՐԶԱԿԱՆ ԵՎ ՌԵԿՐԵԱՑԻՈՆ ԿԱՌԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԶՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ջրային օրենսգրքի 22-րդ, 23-րդ հոդվածներին և 121-րդ հոդվածի 5-րդ մասի 27-րդ կետին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը որոշում է.

Հաստատել զբոսաշրջության, մարզական և ռեկրեացիոն կարիքների համար ջրային ռեսուրսների օգտագործման կարգը՝ համաձայն հավելվածի:

ԼՂՀ ԿԱՐԶԱՊԵՏ

Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ

Հավելված
ԼՂՀ կառավարության
2004թ. նոյեմբերի 16-ի
թիվ 413 որոշման

Կ Ա Ր Գ

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ, ՄԱՐԶԱԿԱՆ ԵՎ ՌԵԿՐԵԱՑԻՈՆ ԿԱՌԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԶՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ

1. Սույն կարգով կանոնակարգվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում զբոսաշրջության, մարզական և ռեկրեացիոն կարիքների համար ջրային ռեսուրսների օգտագործման գործընթացը:

2. զբոսաշրջության, մարզական և ռեկրեացիոն կարիքների համար ջրային ռեսուրսներ օգտագործող անձինք, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ջրային օրենսգրքի 22-րդ և 23-րդ հոդվածների համաձայն համարվելով ազատ ջրօգտագործողներ, ջրօգտագործումն իրականացնում են սույն կարգի պահանջներին համաձայն:

3. զբոսաշրջության, մարզական և ռեկրեացիոն կարիքների համար ջրային ռեսուրսների օգտագործումն իրականացվում է մարդկանց կյանքի պահպանման կանոնների համաձայն՝ էլեկտրոնային Լեռնային Ղարաբաղի Հանրապետության համապատասխան լիազորված պետական մարմինների և, ըստ ջրային ռեսուրսների տարածքային պատկանելության, տեղական ինքնակառավարման մարմնի կողմից սահմանված պահանջներից, տեղերից ու ժամկետներից:

4. Սիրողական և սպորտային ձկնորսության համար ջրային ռեսուրսների օգտագործումը թույլատրվում է ձկնորսության համար սահմանված կանոնների պահպանման դեպքում:

5. Փոքրաչափ նավերով՝ թիակավոր և շարժիչավոր նավակներով, առագաստային զբոսանավակներով, կատերներով լողալու համար ջրային ռեսուրսների օգտագործման կարգը հաստատում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը:

Փոքրաչափ նավերը ենթակա են պետական գրանցման և պետք է ունենան կողանշաններ:

6. զբոսաշրջության, մարզական և ռեկրեացիոն կարիքների համար սահմանված ջրային ռեսուրսների ու դրանց հարակից տարածքների օգտագործումը չպետք է հանգեցնի ջրային ռեսուրսների ջրերի ստանդարտների խախտմանը, ինչպես նաև սահմանափակի այդ տարածքներից օգտվող քաղաքացիների և այլ ջրօգտագործողների իրավունքները ջրային ռեսուրսների նկատմամբ:

7. զբոսաշրջության, մարզական և ռեկրեացիոն կարիքների համար ջրային ռեսուրսներն ու դրանց հարակից տարածքներն օգտագործողները հասարակայնությանն ապահովում են իրենց գործունեության

համար նախատեսված ջրային ռեսուրսների որակական ցուցանիշների մասին տեղեկատվության տրամադրումը, ինչպես նաև դրա մատչելիությունը:

8. **Չբոսաշրջության**, մարզական և ռեկրեացիոն կարիքների համար բնության հատուկ պահպանվող տարածքներում գտնվող ջրային ռեսուրսների օգտագործումը թույլատրելի է, եթե այն չի հակասում այդ տարածքի համար սահմանված նորմերին, հակառակ դեպքում՝ ջրօգտագործողը պետք է սահմանված կարգով ստանա ջրօգտագործման թույլտվություն:

9. **Չբոսաշրջության**, մարզական և ռեկրեացիոն կարիքների համար ջրային ռեսուրսների օգտագործումը, որը խախտում կամ սպառնում է խախտել ջրերի ստանդարտները, կարող է իրականացվել միայն ջրօգտագործման թույլտվության անկայության դեպքում:

10. **Չբոսաշրջության**, մարզական և ռեկրեացիոն կարիքների համար ջրային ռեսուրսների օգտագործումը, որը նպատակաուղղված է շահույթ ստանալուն, կարող է իրականացվել միայն ջրօգտագործման թույլտվության անկայության դեպքում:

**ԼՂՀ կառավարության աշխատակա
զմի
ղեկավար-նախարար**

Ս. Գրիգորյան